14128

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«18» 12 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 286 - 25

Նախաձեռնող՝ ***«Վանանդ Ագրո» ՓԲԸ***
ք. Երևան, Մելիք Ադամյան 2/1

Գործունեությունը՝ ***Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցում***
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

09.01

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 286-25

«18» սեպտեմբեր 2025թ.

Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Վանանդ Ագրո» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, Վանանդ բնակավայր

Ներածական մաս. «Վանանդ Ագրո» ՓԲԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ /այսուհետ՝ Հաշվետվություն/ նախատեսվում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նուշի մշակման արտադրամասի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Բաղրամյանի համայնքապետարանի կողմից տրամադրված 2025թ. սեպտեմբերի 1-ի ՆՆԹ-7637-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.98859 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների է:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն Հաշվետվության՝ նախատեսվող արտադրամասը գտնվում է Վանանդ բնակավայրից մոտ 5 կմ (դեպի հարավ-արևմուտք) հեռավորության վրա, Մ-5 ճանապարհի հարևանությամբ: Տարածի հարևանությամբ չկան շենք-շինություններ և/կամ բնակելի գոտիներ: Գործունեության իրականացման ընթացքում շենքերի ապամոնտաժում և ծառաթփային բուսականության հատում չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ ջրային ռեսուրսներ առկա չեն, որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում: Տարածքին ամենամոտ ջրային ռեսուրսը Արաքս գետն է, որը գտնվում է ներկայացված տարածքից ավելի քան 1.2 կմ հեռավորության վրա:

Տարածքում չեն արձանագրվել ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ:

Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում ազդեցություն որևէ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա չի նախատեսվում, քանի որ գործունեության համար ընտրված տարածքը գտնվում է մոտակա ԲՀՊՏ-ից ավելի քան 25 կմ հեռավորության վրա: Տարածքը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 960 մ բարձրության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Արարատյան լճա-գետային հարթավայրի հյուսիս-արևմտյան եզրամասի հարակից տարածքում, ներկայացված է լավային սարավանդով, որը Արագածի հրաբխային զանգվածի հարավ-հարավ-արևմտյան լավային լանջերի հարթավայրային շարունակությունն է:

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում չկա բերրի հողաշերտ, քանի որ այն երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Ընկերությունը զբաղվում է նուշի աճեցմամբ՝ նոր այգիների հիմնման միջոցով՝ բերրի հողերի մշակմամբ և ժամանակակից արդյունավետ ոռոգման ենթակառուցվածքների տեղադրմամբ: Ծրագրի նպատակն է՝ ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաների և սննդի անվտանգության մեթոդների ներդրմամբ բարձր որակի պատրաստի արտադրանքի արտադրություն ստանալը:

Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից՝ ֆերմայի ենթակառուցվածքների առանցքային տարրերի կառուցմամբ, ինչպիսիք են ջրի կուտակման ջրամբարները, պոմպակայանները, ներտնտեսային էլեկտրամատակարարման ցանցը, կաթիլային ոռոգման համակարգը, ինչպես նաև 660 հեկտար նուշի այգիների աստիճանաբար տնկումը, որը ավարտին է հասցվել 2025թ երկրորդ եռամսյակում:

Տարեց-տարի ավելացող բերքի մշակման համար նախատեսվում է կառուցել նուշի ժամանակակից ավտոմատացված կոտրման և սորտավորման արտադրամաս՝ 2 տոննա 1 ժամում արտադրողականությամբ: Արտադրամասի սարքավորումները մատակարարվելու և տեղադրվելու են ոլորտում առաջատար Borrell կազմակերպության կողմից:

Նախագծվող շնությունները /նուշի կոտրման և սորտավորման արտադրամասերը, շվաքարանը, վարչական բլոկը, կաթսայատունն իր արհեստանոցով և այլ կից օժանդակ կառույցները/ միաթռիչք են՝ իրականացված հիմնականում մետաղական կոնստրուկցիաներով:

Արտադրամասի շենքը միահարկ է, 2160 մ^2 ընդհանուր մակերեսով: Կառուցվելու է մետաղական հիմնակմախքով և սենդվիչ պանելներով: Արտադրամասի էլ. սնուցումն իրականացվելու է սեփական ենթակայանից: Նախատեսվում է տեղադրել ջեռուցման, օդափոխության և հակահրդեհային համակարգեր: Արտադրամասում աշխատելու է 12-15 մարդ:

Նախատեսվող կառույցներից ամենաբարձրի՝ շվաքարանի առավելագույն բարձրությունը չի գերազանցում 12.5 մ նիշը: Տեղանքը հարթ է, և այդ հանգամանքը թույլ է տալիս բոլոր կառույցների հատակի նիշերը պահպանել նույն մակարդակիով, իսկ կառույցների շուրջ իրականացնել բետոնե սալվածք 15 սմ ցածր, +-0,00 նիշից:

Նախագծով նախատեսվող կառույցներն ունեն բեռնատար ավտոմեքենաների մոտեցման և այլ տեխնիկաներով սպասարկվելու հնարավորություն: Ամբողջովին ապահոված են հրդեհաշիջող տեխնիկայի մոտեցումները:

Կառույցների տանիքներն ունեն 8° թեքություն: Ջրահեռացումը կազմակերպված է, ճակատներին արտաքինից մոնտաժված խողովակներով: Արտադրամասերի և շվաքարանի տանիքում ապագայում կտեղադրվեն արևային պանելներ:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- նուշի սորտավորման արտադրամաս - 30 մ x 24 մ,
- նուշի կոտրման արտադրամաս - 30 մ x 24 մ,
- շվաքարան - 20 մ x 24 մ,
- կաթսայատուն՝ իր արհեստանոցով - 15 մ x 6 մ,
- վարչական կառույց - 15 մ x 10 մ,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը - 2160 մ^2:

Գլխավոր շինությունն իրենից ներկայացնում է միահարկ կառույց, որի հատակագծային ընդհանուր առանցքային չափերն են՝ 79.85x23.0 մ, որը կարաններով բաժանված է 2 մասերի: Շենքի հիմնակմախքը մետաղե սյուներից է՝ ուղղաձիգ կապերից բաղկացած շրջանակային միահարկ համակարգով: Վերջինս ջերմային կարանով բաժանված է 2 մասերի՝ 20.0x23.0մ և 59.3x23.0մ:

Արտադրական տարածքի ջերմային ծախսերի ապահովման նպատակով նախատեսվում է տեղադրել բիովառելիքով (նուշի արտարդրությունից առաջացած պինդ կեղև) աշխատող երկու հատ 200 կՎտ ջերմային հզորությամբ պողպատե կաթսաներ: Մեկ կաթսայի ծախսը օրական կազմում է 50 կգ/ժ և հաշվի առնելով, որ նախատեսվում է 2 հատ կաթսա, օրական ծախսը կկազմի 2.4 տոննա (100 կգ/ժ): Արտարդրությունից առաջացած պինդ կեղևը կազմելու 10 տ/օր, ինչն ամբողջովին կարող է ապահովել նախատեսվող երկու կաթսաների աշխատանքը:

ՇՄԱԳ-ում ներկայացվել է շահագործման փուլում ջեռուցման արդյունքում առաջացող արտանետումների հաշվարկներ՝ որոնք կատարվել են ԵՄ CORINAIR մեթոդակարգի գործակիցների միջոցով: Համաձայն հաշվարկի արտանետումների քանակները շատ փոքր են և չեն կարող զգալի ազդեցություն ունենալ մթնալարտային օդի վրա:

Տարածքի ջրամատակարարումը նախատեսվում է բերովի ջրով: Ջրամատակարարումն ապահովելու համար արտադրամասին կից նախատեսված է պոմպակայան, որտեղ նախատեսված է երկաթբետոնե բաք՝ 1300x4000x2000, V=10.2մ^3, և պոմպային կայանք 2 պոմպով, ինվերտորով և ղեկավարման վահանակով՝ խմելու-տնտեսական կարիքների համար, մեկը աշխատող, մեկը պահուստային:

Նախագծում և ՇՄԱԳ-ում ներկայացված են էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, ծխահեռացման, օդափոխության և այլ տեխնիկական լուծումները:

Տարածքում առաջացած կենցաղային և շինարարական աղբը հավաքվելու է համապատասխան վայրերում և պարբերաբար տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարության ընթացքում շահագործվող տեխնիկաների սպասարկումը կատարվելու է հատուկ սպասարկման վայրերում, ուստի շինարարության ընթացքում տարածքում շահագործվող տեխնիկաների թափոնների առաջացում չի ենթադրվում:

Գործունեության իրականացման արդյուքնում որոշակիորեն կավելանա տեղանքի աղմուկը, մասնաորապես՝

շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, և աշխատանքային ժամերը /ցերակային ժամեր/ աղմուկի մակարդակը էական բացասական ազդեցություն չի ունենա շրջակա միջավայրի վրա:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև

շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ընդհանուր ջրօգտագործումն ամբողջ ժամանակահատվածի համար կազմում է՝ 72.6+ 837 = 909.6մ³/շին ժամ:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես շինարարության տարածքի սահմաններում:

Նուշի մշակման արտադրամասի կառուցման աշխատանքները տևելու են մոտ 10 ամիս:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է ավելորդ թափոններից և բերվելու է հնարավորինս բարեկարգ տեսքի, շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից, կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման աշխատանքներ:

Գործունեության իրականացման ընթացքում ծառաթփային բուսականության հատում չի նախատեսվում: Գործունեության իրականացման շրջանակներում իրականացվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, որի արդյուքնում տարածքի որոշակի հատվածում տնկվելու եմ թարմ ծառաթփային բուսականություն:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն Հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Ինչը ներառում է՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,
- շինարարական աղբի տեղափոխումմ դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- հրդեհաշիջման նպատակով ջրի բաքերի տեղադրում,
- շինհրապարակում 3 տոննա տարողության պլաստմասե տարայի տեղադրում՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար տեխնիկական որակի ջրի օգտագործում, որը պետք է բերվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործման բացառում,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

- Շահագործման փուլում աշխատանքների կազմակերպում միայն ցերեկային ժամերին՝ ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- մեքենաների երթերի հաճախականության կառավարում՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով,

- շահագործման փուլում ընդգրկվելու են համապատասխան աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով՝ հերթափոխային գրաֆիկով,

-արտադրամասն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով և առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,

- իրականացվելու են աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակության պարբերական ստուգումներ,

- նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքների, լանդշաֆտային այլ փոփոխությունների իրականացման բացառում,

- ռելիեֆի բնական ձևերի, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջների պահպանում և ապահովում, ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունների սահմանափակում և այլն:

Շահագործման փուլում որոշակիորեն կավելանա աղմուկի մակարդակը, մասնաորապես ցերեկային ժամերին, ինչը սակայն բացասաբար չի անդրադառնա հարակից բնակավայրի բնականոն կյանքի վրա, քանի որ գործունեության տարածքը բավականին հեռու է բնակելի տարածքներից:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն Հաշվետվության՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Օրենքով սահմանված կարգով գործունեության ենթակա տարածքում իրականացվել է տեղազննման աշխատանքներ և դիտարկումներ՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով, որի արդյունքով որևէ անհամապատասխանություն չի արձանագրվել, տարածքում ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված որևէ գործունեություն չի իրականացվել:

Շինարարության և շահագործման փուլերում գործունեության իրականացումը նաև ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ մասնավորապես, բացվելու են նոր աշխատատեղեր և առաջնահերթություն է տրվելու թե՛ շինարարության և թե՛ սպասարկման ընթացքում ներգրավել մասնագիտական և ոչ մասնագիտական աշխատուժ հարակից համայնքներից/բնակավայրերից:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ազգային անվտանգության ծառայությունը, քաղաքաշինության կոմիտեն, Արմավիրի մարզպետարանը, Բաղրամյանի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Բաղրամյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Ապահովել շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացումը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ-ում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վանանդ Ագրո» ՓԲԸ կողմից ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան